

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Ընդունվել է 22.10.2008*

**Հոդված 1.** «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 5-րդ հոդվածը «վարկային կազմակերպությունները» բառերից հետո լրացնել ««Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային բյուրոները» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «սույն օրենքի 14 հոդվածին համապատասխան» բառերը:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 13.2-րդ հոդվածով`

*«Հոդված 13.2. Վարկային բյուրոյին բանկային գաղտնիքի տրամադրումը*

1. Բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը վարկային բյուրոյին չի համարվում բանկային գաղտնիքի հրապարակում:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**

17.11.2008  
ՀՕ-187